

ԲԵՅՐՈՒԹԻ «ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹԸ՝ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բանալի բառեր՝ հայ-արաբական հարաբերություններ, Լիբանանի հայ համայնք, Լիբանանի հայ մամուլ, լիբանանահայ տպագիր մշակութային ժառանգություն:

Keywords: Armenian-Arab relations, Armenian community of Lebanon, Armenian press of Lebanon, the print and cultural heritage of Lebanese Armenians.

Հայ-արաբական հարաբերություններ. Լիբանանի հայ համայնք

Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և քաղաքական [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7]:

Հայերի մշակութային, առևտրական և քաղաքական բնույթի շփումներն արաբասեմական աշխարհի հետ ունեն բազմադարյան պատմություն և իրենց արմատներով գնում են դարերի խորքերը [Հովհաննիսյան, 2003, 65]: Հայերի ու արաբների կանոնավոր առնչություններն սկիզբ են առել սուկ 7-րդ դարից: 7-8-րդ դարերից արդեն հայ մատենագիրները որոշակի պատկերացում ունեին արաբների և նրանց կրոնի մասին [Արաբական աղբյուրներ: Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր, հտ. Գ, 2005, 62]:

Ուսումնասիրություններից մեկում լուսաբանվում է Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագիտության քննական լույսի ներքո: Հատկանշական է հետևյալ ձևակերպումը. «Արաբների անունը հայերի պատմության մեջ կգրվի ոսկե տառերով» [Հովհաննիսյան, 2004, 173]:

Լիբանանի ներկայիս տարածքում հայեր բնակվել են հնագույն ժամանակներից: Լիբանանի հայկական գաղութը գոյատևել է համարյա անընդհատ՝ պարբերաբար համալրվելով Հայաստանից գաղթած սովոր խմբերով և երբեմն կարևոր դեր է կատարել հայ ժողովրդի կյանքում: Լիբանանի հայ համայնքի կապերը Հայաստանի հետ զգալիորեն սերտացել են 1950-ական թթ. 2-րդ կեսից: Բեյրութի հայ համայնքը կազմավորվել է XIX դ. վերջին, աստիճանաբար սովորացել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 290, 294]:

1930-ից Բեյրութի հյուսիսային արվարձաններից Անթիլիաս ավանում է հաստատվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը [Նույն տեղում, 297]:

Բեյրութում առ այսօր գործում են Ս. Հարություն, Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Ս. Հովհաննու Կարապետ, Ս. Սարգիս, Ս. Աստվածածին, Ս. Վարդանանց և Ս. Քառասնից մանկանց եկեղեցիները [Նույն տեղում, 298]:

Լիբանանահայ համայնքում զարգացած են գիտությունը, մշակույթը, գրականությունը, թատրոնը, երաժշտությունը և կերպարվեստը [Նույն տեղում, 314]:

Լեռնային Լիբանանում բավական վաղ ժամանակներից գործում էր Զմմառի հայ կաթոլիկ վանքի հոգևոր դպրոցը, որը ընդհատումներով գոյատևում է առ այսօր [Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հատոր երկրորդ, 2003, 341]

Լիբանանի հայ մամուլը

Հայոց պարբերական մամուլն արտացոլում է հայ ժողովրդի բազմադարյա պատմական ուղին [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ, 1970, 5]:

«Հայ մամուլը, մանաւանդ արտասահմանի մեր կեանքին մէջ ունի սրբազան պարտականութիւն մը՝ հայապահպանման սրբազան գործը: ...Կարելի է անվարան ըսել, թէ հայ մամուլին գոյութիւնն ու կենսունակութիւնը համեմատական է, կամ չափանիշ կը կազմէ անոր հրատարակութեան վայրին հայ գաղութին հայապահպանման եւ կենսունակութեան: Այն գաղութները որոնք կորսնցուցած են իրենց հայ մամուլը, հետզհետէ շիջումի նշաններ ցոյց կու տան» [Տէր-Խաչատուրեան, 2014, 13]:

Լիբանանի մայրաքաղաք Բէյրութը Սփյուռքի հրատարակչական կարևորագույն կենտրոններից է: Լիբանանում առաջին հայերեն գիրքը «Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն»-ը, տպագրվել է 1894 թ. «Հայ կաթողիկէ» տպարանում [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 458]:

Բէյրութում առաջին հայերեն թերթը լույս է տեսել 1921 թ. ցայսօր լույս է տեսել շուրջ 200 անուն թերթ ու հանդես: Այժմ լուս են տեսնում 20-ից ավելի պարբերականներ: Կան հայկական տպարաններ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 295]:

1894-2012 թթ. Լիբանանում գործել է շուրջ 100 հայկական տպարան, հրատարակվել է 6500 անուն գիրք՝ ավելի քան 3.5 մլն տպաքանակով: Լիբանանյան տպարաններում և հրատարակչատներում լույս են ընծայվել հայ դասական և խորհրդահայ գրեթե բոլոր հեղինակների ստեղծագործություններից, թարգմանություններ՝ համաշխարհային դասականներից: Տպագրում են նաև դպրոցական դասագրքեր, զրուցարաններ, օրացույցներ, երգարաններ, հայերեն պարբերականներ [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 459]:

Լիբանանում հայկական գաղութի սովորագմանը զուգընթաց, հայերեն պարբերականներ են հրատարակել նաև հայ քաղաքական կուսակցությունները, հայրենակցական, մշակութային, կրոնական, մարզական, երտասարդական, պատանեկան կազմակերպությունները, կրթական հաստատությունները, անհատ անձինք: Լիբանանահայ մամուլը հիմնականում տպագրվել է Բէյրութում, որտեղ լույս է տեսել 200-ից ավելի հայերեն պարբերական [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 318]:

Առավել աչքի ընկած և համեմատաբար տևական հրատարակված պարբերականներից են «Լիբանան» (1924-35) եռօրյա թերթը, «Երիտասարդ հայունի» (1932-34, 1947-68) ամսագիրը, «Ամէնուն նոր տարեցոյցը» (1937-42) տարեգիրքը, «Առաւօտ» (1938-47) օրաթերթը, «Ժողովուրդի ձայն» (1938-49) պաշտոնաթերթը, «Հայ գիր» (1938-44) հանդեսը, «Ծիածան» (1939-49), «Նայիրի» (1941-1949 թթ. տպագրվել է Հալեպում որպէս ամսագիր, իսկ 1952 թ.-ից՝ Բէյրութում՝ որպէս լրագիր) պարբերաթերթերը, ՀՄՄ «Կայծ» (1943-47) պաշտոնական հանդեսը, «Անի» (1946-55) ամսագիրը, «Հասկ» հայագիտական տարեգիրքը (1948-2004), «Բժիշկ» (1955-84) ամսաթերթը, ԹՄՄ «Շիրակ» (1956-93 և 2004-06) ամսագիրը, «Յառաջ» (1957-64) շաբաթաթերթը, «Նոր կեանք» (1957-98, ընդհատումներով) պարբերաթերթը, «Էջեր գրականութեան եւ արուեստի» (1965-72) հանդեսը, «Երիտասարդ հայ» (1969-75) երկշաբաթաթերթը, «Ահեկան» (1966-70) հանդեսը, «Ազդակ» (1927 թ.-ից), «Զարթօնք» (1937 թ.-ից), «Արարատ» (1937 թ.-ից) օրաթերթերը, «Մարգիկ» (1980 թ.-ից) ամսաթերթը, «Դիտակ» (1996 թ.-ից) ամսագիրը, «Կամար» (2005 թ.-ից) հանդեսը [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 459-460]:

Այժմ առավել հանգամանալից ներկայացնենք «Ազդակ» պարբերականը, որն ազգային, գրական, հասարակական-քաղաքական օրաթերթ է: ՀՅԴ Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ (1965-ի հունիսից): Հրատարակվում 1927-ից (որոշ ընդհատումներով): Սկզբում եղել է եռօրյա,

1930-ից՝ երկօրյա, 1932-ից՝ օրաթերթ: Լուսաբանում է հայկական, լիբանանյան և միջազգային քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և մարզական անցուդարձերը: 1970-ականների կեսից, մերձավորարևելյան ճգնաժամի պայմաններում, համայնքի քաղաքական մյուս ուժերի հետ պայքարում է Լիբանանի և հայկական մյուս գաղթավայրերի հայությանն սպառնացող ձուլման վտանգի դեմ, հանդես գալիս հանուն հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծման: Ներկայում հայ տպագիր մամուլի առաջատարներից է: Հրատարակում է բացառիկ համարներ՝ նվիրված ազգային և կուսակցության նշանակալի հոբելյաններին, ինչպես նաև Ամանորի առիթով: Ունեցել է «Հարդագող», «Ազդակ-շաբաթօրեակ», «Ազդակ-մարզական» և այլ հավելվածներ, 2002-ից լույս են տեսնում մանկապատանեկան «Պզտիկ-մզտիկ», մարզական «Նավասարդ», կանանց համար՝ «Անահիտ» հավելվածները, 2003-ից՝ «Ազդակ» ամսաթերթը [Նույն տեղում, 30-31]:

Կարևոր է նշել, որ Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնում, ի շարս այլ մատենագիտական աշխատանքների, կազմվում է նաև «Ազդակ» օրաթերթի հայագիտական նյութերի մատենագիտությունը:

Այժմ ներկայացնենք «Ազդակ» օրաթերթի 1948 թ. տպագրված որոշ արժեքավոր և ուշագրավ հայագիտական հոդվածներ:

(Համար 51) տպագրված է Դշխուհի Նալբանդեան-Չարըխեանի հեղինակած «Հետաքրքրական դրուագներ Միքայել Նալբանդեանի կեանքին» վերնագրով հոդվածը:

(Համար 57, 58) տպագրված է Սահակ Զթչեանի հեղինակած «Նախիջևանի նշանակությունը Հայաստանի համար» վերնագրով հոդվածը (Քաղաքական վերլուծություն):

(Համար 74) տպագրված է «Ուխտագնացություն մը դէպի Արարատ» (Հատուածներ Գ. Միրմէլեանի «Հարց կուտամ ձեզի տիկիններ՝ եւ պարոններ՝ քրքի 15-րդ գլուխէն» վերնագրով հոդվածը:

(Համար 93) տպագրված է «Լեհերը եւ հայերը» վերնագրով հոդվածը (Լեհ և հայ ժողովրդի մշակութային, պատմական կապերի վերաբերյալ):

(Համար 100) տպագրված է Վրացեան Սիմոնի հեղինակած «Եւրոպացի՞ թե՛ ասիացի» վերնագրով հոդվածը (Ֆրանսիացի նշանավոր պատմագիր Ռընէ Կռուսէի ֆրանսերէն «Հայոց պատմության» առաջին հատորի հրատարակության առիթով Հայաստանի վերաբերյալ բնորոշում՝ «Եվրոպա Ասիայի մեջ»):

(Համար 105) տպագրված է «Հայ օրիորդի մը յաջողությունը» վերնագրով հոդվածը (Օպերային երգչուհի Լուսին Ամարայի՝ (Թագուհի Արմաղանյան) Լոս Անջելեսի երաժշտական մրցությունում մրցանակ շահելու մասին):

(Համար 126) տպագրված է Հին անուններ: (Կնոջական) վերնագրով հոդվածը (1946 թվականին Վենետիկում տպագրված Հ. Վարդան Հացունու «Հայուհին պատմութեան առջև» ուսումնասիրությունից քաղված հին հայերի կողմից օգտագործվող կանացի անունների ցանկ):

(Համար 171) «Հայկական կեանք» խորագրի ներքո տպագրված է «Արամ Խաչատուրեանի մէկ նոր յաղթանակը» վերնագրով հոդվածը (Փարիզում երգահան Արամ Խաչատրյանի համերգի մասին):

(Համար 182) տպագրված է «Մամուլ» խորագրի ներքո «Մուտք» վերնագրով հոդվածը (Պաղեստինում տպագրվող «Գոյամարտ» շաբաթաթերթի հայապահպան գործունեության, հայերի և տեղացի ժողովրդի բարեկամական կապի մասին):

(Համար 204) տպագրված է Ս.Լորելլի հեղինակած «Գ. Զօհրապ եւ այլ հայ գրողներ շուէտերէն թարգմանուած» վերնագրով հոդվածը (Շվեդիայի «Վի» շաբաթաթերթում հրատարակված ուսումնասիրություն՝ նվիրված գրող Գրիգոր Զօհրապին):

(Համար 218) տպագրված է «Հայր Ալիշան եւ Խրիմեան Հայրիկ» վերնագրով հոդվածը (Ավետիք Իսահակյանի «Իմ Յուշերից» հատորից հատված. Էջմիածնում Ավետիք Իսահակյանի հանդիպումը Խրիմյան Հայրիկի հետ):

(Համար 222) տպագրված է «Մեւանայ լիճը դիտուած զուիցերիացիի մը ակնոցով» վերնագրով հոդվածը (Շվեյցարական «Լա Թրիպլին Տը Ժնև» թերթում հրատարակված «Մեւանի լիճը» խորագրով հոդվածի մասին):

(Համար 230) տպագրված է Շաւարշ Միսաքեանի հեղինակած «Ինչ որ ցանեն կը բուսնի» վերնագրով հոդվածը (Հայկական գաղթավայրերում հայ մանուկների կրթություն ստանալու մասին):

(Համար 237) տպագրված է «Հայ մշակույթին համար» վերնագրով հոդվածը (Սփյուռքում հայ մշակույթի պահպանման մասին):

Հայաստանի ազգային գրադարանի կայքում, ի թիվս այլ շտեմարանների, գետեղված է նաև «Հայ մամուլ» շտեմարանը, որտեղ ներառված են նաև «Ազդակ» պարբերականի մատենագիտական տվյալները: «Կարդալ առցանց» հղման ներքո հասանելի են պարբերականի հերթական համարների թվային պատճենները [«Հայ մամուլ» շտեմարան]:

SUMMARY

We briefly touched upon the Armenian-Arab relations, the Armenian community of Lebanon, the Lebanese Armenian press, in particular the daily newspaper “Azdak.”

Armenians settled in Lebanon under the dictates of historical and political circumstances. They created their respective community structures, printed the Armenian press and so on.

The periodical “Azdak” covers various topics.

The Armenian Press database is also available on the website of the National Library of Armenia, which also contains bibliographic data of Armenian periodicals published in Lebanon. There is a link “read online” where digital copies of periodicals are available.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արաբական աղբյուրներ: Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր, հտ. Գ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005, 704 էջ:
2. Հայ գաղթաշխարհի պատմություն: (Միջնադարից մինչև 1920): Եռահատորյակ, հտ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2003, 518 էջ:
3. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ:
4. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ: ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրություն, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի կոմպլեկտավորման բաժին / Կազմ.՝ Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, 621 էջ:
5. Հայ սփյուռք հանրագիտարան / Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 731 էջ:
6. Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Հայ մամուլ» շտեմարան [Էլեկտրոնային հրատարակություն] <https://is.gd/uVdwz4> 04.12.2023:
7. Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հտ.1, Երևան, Զանգակ-97, 2003, 416 էջ:
8. Հովհաննիսյան Ն. Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, Զանգակ-97, 2004, 208 էջ:
9. Տեր-Խաչատուրեան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պեյրուք, Վահե Սեթեան, 2014, 693 էջ: